

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՋԵՌԱԳԻՐ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԸ
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱԳՈՅՆ ԹՂԹԵԱՅ ՋԵՌԱԳԻՐԸ ԼՈՒՍԱՏԻՊ
ՆՄԱՆԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ

1981ին լրանում էր հնագույն թղթայ ձեռագրի 1000, ամեակը, որը մի շարք առումներով եզակի յուշարձան է հայ ձեռագրական մշակույթի գանձարանում: Կառավարության որոշմամբ Մաշտոցեան Մատենադարանում պահուող այս թանկագին ձեռագիրը պետք է հրատարակուէր երկու ստուար հատորներով, որոնցից մէկում բուն մատենան՝ ամբողջական նմանահանութեամբ, միւսում՝ նմանատպութիւնը, այսինքն ողջ քնագիրը՝ վերածնութեամբ, ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով: Սակայն հրատարակչական տպարանային բնոյթի թերացումների պատճառով գործը ձգձգուեց. մինչեւ որ վերջին տարիներին Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշնեանի միջնորդութեամբ եւ արգենտինահայ քարերարներ Տիգրան եւ Նորա Եսայանների մեկնաստութեամբ հնարաւոր եղաւ իրականացնել հատորներից առաջինի՝ ձեռագրի ամբողջական նմանահանութեան տպագրութիւնը: Ստորեւ ներկայացնում ենք հատորի սկզբում գետեղուած նախագիրը՝ գրուած շուրջ 25 տարի սոյն մեծարժէք մատենան ուսումնասիրութեամբ զբաղուած ձեռագրագէտ Արտաշէս Մաթեոսեանի կողմից:

Մինչեւ 20րդ դարի քառասնական թուականները միջնադարեան ձեռագիրը դիտուում էր որպէս այս կամ այն գրատեսակը պարունակող մատենան: Այսօր արդէն ստեղծուել է ձեռագրերի մասին առանձին գիտութիւն՝ ձեռագրագիտութիւն, որը ձեռագիրը դիտում է որպէս տուեալ ժողովրդի հոգեւոր կեանքի քարդ ու

քաղմակողմանի յուշարձան, պատմական որոշակի ժամանակաշրջանի արդիւնք, նաեւ վկայութիւն ձեռագիրն ստեղծող հասարակութեան տնտեսական զարգացման եւ նիւթական մշակույթի նուաճումների, որոնք կեանքի են կոչել նրա հանդէս գալու պահանջարկն ու տեխնիկական նախադրեալները: Այդ կարգի յուշարձաններ են նաեւ հայերէն ձեռագրերը «մեր ազգային ամենամեծ հարստութիւնը, որ ժառանգութիւն ենք ստացել մեր հայրերից», ինչպէս իրաւամբ նկատում է հայ ձեռագրական մշակույթի մեծ երախտաւոր Գ. Յովսէփեանը եւ ուրախութեամբ ընդգծում, «որ մեր ազգային ամենամեծ հարստութեան ամենամեծ մասը գտնուում է Մայր Հայրենիքում» (Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածու, թիւ 86):

Յիրաւի, ձեռագրական հսկայական կորուստներից յետոյ մեզ հասած շուրջ երեսուն հազար ձեռագրերից, որոնք այսօր էլ սփռուած են աշխարհի բոլոր ծայրերում մեծ ու փոքր հաւաքածուներով, տասներեք հազարը պահուում է Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարանում:

Հայերէն ձեռագրերում ամբարշտուած է ազգային եւ թարգմանական մատենագրական հսկայական հարստութիւն, որի նշանակութիւնը դուրս է գալիս մեր երկրի սահմաններից: Դրանք հայոց լեզուի ու գրի յուշարձաններ են. հայ եւ ուրիշ ժողովուրդների պատմութեան ու գրականութեան, փիլիսոփայութեան ու իրաւունքի, տիեզերագիտութեան ու տոմարի,

քժշկութեան ու բնական գիտութիւնների, հայ գրչութեան մանրանկարչութեան, խազագրութեան եւ այլ արուեստների յուշարձաններ, որոնք մասամբ ուսումնասիրուել են, իսկ շատերը դեռ կարօտ են խորագոյն եւ համակողմանի ուսումնասիրութեան:

Հայ ժողովրդի անցեալի պատմութիւնն առաւել ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է առանձին ձեռագրերի, մասնաւորապէս ժողովածուների նմանահանութիւնն ու նմանատիպ հրատարակութիւնը, որոնք ուսումնասիրողների աւելի լայն շրջանակ կ'ընդգրկեն տարածութեան եւ մասնագէտների բազմազանութեան առումով, բովանդակութեան հետ միաժամանակ հնարաւորութիւն կը ստեղծեն ուսումնասիրելու հենց ձեռագիրը որպէս պատմութեան եւ մշակոյթի յուշարձան ստեղծուած պատմական որոշակի ժամանակում, վայրում, յանգամանքներում իր գրիչով, ծաղկողով եւ սեփական պատմութեամբ, յիշատակարաններով:

Ներկայացուող ձեռագրական յուշարձանը Մատենադարանի թիւ 2679 ժողովածուն է. բանասիրութեանը յայտնի «Հայերէն հնագոյն թղթեայ ձեռագիր» անունով, որը գրաւոր մշակոյթի մէջ բացառիկ արժէք ունի եւ իր ստեղծման հազարամեակի առթիւ հրատարակուած է նմանահանութեամբ եւ նմանատպութեամբ:

Ձեռագիրը պարունակում է աշխարհիկ բովանդակութեամբ արժէքաւոր շատ երկեր եւ այդ բնոյթի հնագոյն ժողովածուն է: Գրուած է բոլորգրով եւ այդ գրատեսակով մեզ յայտնի առաջին ձեռագիրն է: Հնագոյնն է նաեւ իր գրանիւթով թղթով, որին առաջին անգամ ենք հանդիպում հայ իրականութեան մէջ: Ձեռագիրը կազմուած է երկու տարբեր ժողովածուներից, ընդ որում երկուսի խմբագիր կազմողը Դաւիթ ֆահանսն, է գրիչը՝ նրա որդի Դուկասը: Առաջին մասը գրուած է 961 թուականին,

երկրորդը դրանից որոշ ժամանակ յետոյ: Երկու ձեռագրերը 1225թ. միացւում են իրար մի կազմի մէջ: 16րդ դարում ձեռագիրը սկզբից միջից եւ վերջից բաւական թերթեր կորցրած, նորից է կազմուած: Դաւիթ ֆահանայի երկու ժողովածուներն այդ վիճակում էլ հասել են մեր օրերը որպէս մի ձեռագիր, որն այժմ ունի 19,5. 28,5 սմ. մեծութիւն եւ 360 թերթ:

Ձեռագիրը Մատենադարանի հաւաքածու է մուծուել 1881 թուականին, ինն հարիւր տարեկան հասակում եւ անմիջապէս դարձել գիտնականների հետաքրքրութեան առարկան, որոնք նրանից առանձին միաւորներ են հրատարակել: Սոյն մատեանը, այսուհանդերձ, մինչեւ վերջերս ըստ ամենայնի ուսումնասիրուած չէր, չէին բացայայտուած նրա բովանդակութիւնն ու էութիւնը ստեղծման շարժառիթները, պատմական միջավայրը, նոյնիսկ ստոյգ ժամանակը, նրա երկու տարբեր ժողովածու լինելու հանգամանքը, ժողովածուների ստեղծման բնոյթն ու նպատակները, Դաւիթ ֆահանայի մատենագիր լինելու հանգամանքը, որ յայտնի է դառնում ուղիղ հազար տարի յետոյ:

Աշխարհի հնագոյն թղթեայ գրաւոր յուշարձաններից մէկը հազարամեայ իր կեանքն անցկացրել է անապահով թափառումների երկարածիգ հարիւրամեակների միջով եւ մեզ է հասցրել հաշմուած ու ծերացած մարմինը ծալֆերում անթեղուած գիտութեամբ եւ իմաստութեամբ: Հարիւրից աւելի թերթեր կորցնելուց յետոյ, պահպանուած երեք հարիւր վաթսուն դեղնած ու ֆայֆայուած թերթերի տեղ-տեղ թանափակեր ու տողաթափ, յանախ փերուած ու ջնջուած, կրկնագրուած, մաշուած, բազմաթիւ էջերում մթերուած են տոմարագիտական, աստղաբաշխական, տիեզերագիտական, պատմա-ժամանակագրական, գեղարուեստական, մատենագիտական, վկայաբանական, դաւանաբանական, մեկնողական,

քարգմանական եւ ազգային ամբողջական եւ փառաւորութեան շարակցութեամբ քաղաքի երկեր, որոնց հնութեան վերջին սահմանը տասներորդ դարն է, իսկ սկիզբը դարերի խորքը: Սոյն երկերը եւ հատուածները, աւետարանական բնագրերից բացի իրենց տեսակի մէջ ամենահնագոյն գրաւոր մոյշներն են հայ մատենագրութեան մէջ որովհետեւ նրանք իրենցից առաջ գրուած որեւէ ձեռագրով մեզ չեն հասել: Երկեր եւ հեղինակներ կան, որոնց միայն այս մատենանում ենք հանդիպում:

Դաւթի ժողովածուները պարունակում են 5-10րդ դարերում հայոց լեզուով ստեղծուած ինքնուրոյն եւ քարգմանական մի քանի տասնեակի հասնող երկերից փառաւորներ, ինչպէս եւ ամբողջական երկեր, իրենց ժամանակին բնորոշ լեզուափոխական առանձնապատկերներով, եւ քանի որ ընդօրինակելիս պահպանուել են նրանց ստեղծման ժամանակի ուղղագրութիւնն ու կետադրութիւնը, կարելի է նշանակութիւն ունեն հայոց լեզուի գրաւոր շրջանի առաջին վեցհարիւրամեակի ուսումնասիրութեան համար:

Հետաքրքրական եւ արժեքաւոր են խմբագրի սրբագրութիւններում եւ թելադրութեամբ գրուած հատուածներում հանդիպող խօսակցական լեզուի հետքերը:

Այն նաեւ հայերէն մետրոպոստեղծ բոլորգրով գրուած առ այժմ յայտնի ամենահին ամբողջական ձեռագիրն է, հայոց միւս գրատեսակների՝ երկաթագրի եւ գրչագրի, ինչպէս եւ գաղափարագրերի, համառօտագրութիւնների ինքնատիպ օգտագործմամբ, կետադրական նշանների, գրութեան ձեւերի եւ գրչութեան արուեստի այլեւայլ բաղադրիչների հնագոյն կիրառութեամբ, որոնք հայ հնագրութեան ուսումնասիրութեան համար անգնահատելի կարեւորութիւն ունեն:

Դաւիթ փառաւորի կողմից բոլորգրի գործածութիւնը, որպէս գրչութեան հիմնա-

կան գիր, պէտք է դիտել մշակոյթի աշխարհականացման պրոցեսի արտայայտութիւններից մէկը:

Սա թղթի վրայ գրուած մեզ յայտնի առաջին ձեռագիրն է հայ իրականութեան մէջ: Այն նաեւ Եւրոպայի եւ Նախկին ՌՍՀՄ տարածքում հնագոյն թուղթն է, իսկ թուղթը պատրաստուած է Հայաստանում, որով հայերը դառնում են աշխարհի հնագոյն թուղթ պատրաստող ժողովուրդներից մէկը:

Վերջապէս մեզ յայտնի առաջին թղթեայ ձեռագիրը կազմողների, ստացողի եւ գրչի ինքնագրով մեզ հասած առաջին ժողովածուն է, որ ձեռագիր, է դարձել ոչ թէ նոյնաման մատենաների արտագրութեամբ, ինչպէս հիմնականում ստեղծուած էին ձեռագրերը այլ որպէս մատենագրական ստեղծագործութիւն շարադրուած ուսուցման նպատակով, որոշակի ծրագրով եւ նիւթերի համապատասխան ընտրութեամբ ընդ որում, հայրը՝ Դաւիթը, նիւթն ընտրել է, որդին՝ Ղուկասը գրել, իսկ հայրը վերստին սրբագրել: Եւ չնայած նրանց առաջացման տարբեր ժամանակներին միմեանց շարունակութիւն են կազմում եւ լրացնում միմեանց թէ՛ գիտական եւ թէ՛ դաւանաբանական նիւթերով:

Ժողովածուներից ամէն մէկն առանձին խոշոր քաղցրների շարահարութիւն է, որոնցից իւրաքանչիւրն իր մէջ ամփոփում է Դաւթի փառած-համադրած մեծ ու փոքր միաւորներ: Հակառակագրով նրանց միասին յայտնուելը մի կազմի մէջ մեզ իրաւունք է տալիս ձեռագիրը հրատարակելիս մի խորագրով ներկայացնել որպէս Դաւիթ մատենագրի ստեղծագործութիւն: Ժողովածուներից երկուսի սկզբի թերթերն էլ քաղուած են, եւ յայտնի չէ, թէ նրանք ինչպէս են կոչուել: Սակայն յիշատակարաններում հանդիպում ենք նրանց քովանդակութեան հեղինակային բնորոշումներին: Առաջինում Դաւիթը գրում է, որ

դաւանաբանական նիւթերը (որոնք կազմում են ձեռագրի մէկ երրորդը) «ի մի վայր բովանդակեցի առեալ եւ սուղ ինչ ի սրբոյն Անդրէասի վարդապետութենէն եւ յայդոց նորին նմանեաց զշարադրութիւն տոմարաց հաւաքեցի ի գիրս յայս» (154ա) (որոնք կազմում են ձեռագրի երկու երրորդը): Ուրեմն այս ժողովածուն տոմարական շարադրութիւնների գիրք է, այսինքն «Գիրք կամ մատեան շարադրութեան տոմարաց»:

Երկրորդ ժողովածուն աւարտում է այսպէս. «Արդ աղաչեմ զամենեւեան, որք կարդայք զծաղիկս զայս հաւատոյ ս. զիս գրաւիք անմոռաց յիշեցէք» (165բ): Ուրեմն Դաւիթն իր ժողովածուն կոչում է «Ծաղիկք հաւատոյ»: Հայ մատենագրութեան մէջ յայտնի են «Կնիք հաւատոյ». «Արմատ հաւատոյ» կամ «Հաւատարմատ», «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» գուտ դաւանաբանական ժողովածուները: Դաւիթ Բաղանայի մատենանը գուտ դաւանաբանական չէ, այլ պարունակում է նաեւ բնական գիտութիւններից, պատմական, իմաստասիրական, մատենագիտական արժեքաւոր երկեր եւ փաղաւածակներ:

Երկու ժողովածուների վերնագրերից ոչ մէկն էլ առանձին վերցրած («Գիրք շարադրութեան տոմարաց» եւ «Ծաղիկք հաւատոյ») լիովին չի արտայայտում ամբողջ ձեռագրի գիտական եւ դաւանաբանական պարունակութիւնը: Ուստի նպատակայարմար համարեցինք միացնել այդ երկու վերնագրերը մէկի մէջ պահպանելով ձեռագրի բովանդակութեան զոյգ բաժիններն արտայայտող հեղինակային անուանումները: Սակայն նկատի ունենալով, որ տոմարից բացի ձեռագրում շատ են նաեւ գիտական այլ բնութիւնի նիւթեր, «շարադրութիւն տոմարացը» փոխարինեցինք «գիտութեան» ընդհանուր բառով եւ ընտրեցինք «Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւիթ Բաղանայի» խորագիրը:

Սոյն խորագիրն արդարացում է նաեւ երկու ձեռագրերի որպէս մի յուշարձանի միւս առանձայատկութիւնների ուսումնասիրութեան տեսակէտից. Բաղի որ մի անհատի կողմից կազմուած երկու ձեռագրերը գրուած են նոյն զրչի ձեռքով, միեւնոյն լեզուով, զրչութեան արուեստով, գրատեսակով, նոյնպիսի գրանիւթի վրայ, նոյն չափերով, պատմական նոյն պայմաններում ու միջավայրում: Վերջապէս երկուսը միասին են կրում Մատենադարանի հակաֆաժուի 2679 համարը եւ հայերէն հնագոյն բոլբոջ ձեռագիր համարում:

Յիշատակելով ձեռագրական սոյն յուշարձանը, նմանահանութեամբ եւ նմանատպութեամբ մենք գիտական շրջառութեան մէջ ենք դնում մի կողմից Մատենադարանի բիւ 2679 հազարամեայ ձեռագիրը, միւս կողմից Դաւիթ Բաղանայի «Մատենանը»: Նմանահանութեան եւ նմանատպութեան հիմնական նպատակը ձեռագրի բնագրի առանց փոփոխութեան վերականգնումն է եւ հրապարակումը, որը պէտք է փոխարինի ձեռագրին: Դարահոյով ձեռագիրն ազատում է չարշարելուց կողմնակի միջամտութիւնից, որտեղ խանգարում էին նրա հանգիստը եւ կարեացնում յուշարձանի կեանքը: Դաւիթ Բաղանայի «Գիտութեան եւ հաւատոյ մատեանի» համար հանգստութիւնը նրա երկարակեցութեան գրաւականն է: Ձեռագրին կը փոխարինեն նմանատիպ հրապարակումները եւ լրիւ կը բաւարարեն հայոց լեզու, հայ գիր ու զրչութեան արուեստ, ինչպէս նաեւ տարարնոյթ բովանդակութիւնն ուսումնասիրող քաղաքիւ մասնագէտների, հնարաւորութիւն կ'ընձեռեն հաղորդակցուելու տպագրուած հազարամեայ մատենանին:

Նմանահանութիւնը ձեռագրի լուսանկարչական հրատարակութիւնն է, նոյն չափերով բոլբոյ ու բանափ գոյների պահպանմամբ, միայն բուղբն ու տպագրութեան ներկը ժամանակակից են: Նմանատպութիւնը նշտութեամբ պահպանում է էջում տողերի չափն ու փակակ. տառի, բառի, նախադասութեան գրութեան նոյնութիւնը, բայց այստեղ ոչ միայն բուղբն ու ներկը, այլեւ գիրն է ժամանակակից շարուածֆային: